Հուսկ ամենայն՝ յորդորեմք զՍրբազնութիւնս Զեր՝ յայսմ հետէ առա-ւել ևս արիանալ և անդուլ եռանդեամք գործել յասպարիզի մտաւոր և բարոյական կրթութեան մանկանց բանաւոր հօտի Զերոյ. գուն դործեսջիք անդադար քարոզութեամբ խելամուտս առնել զնոսա բազմագիմի օգտից և արդեանց ուսման և դաստիարակութեան, վառելով ի սիրտս նոցա զիսանդ-ուսումնասիրութեան:

Եւ մեք՝ յամենայն ժամ աղօթս առնեմք առ Ամենաբարձրեալն Ա.ս-տուած, զի նա ինքն օրհնեսցէ զառաջիկայ ձեռնարկս և զգործս մեր և Զեր ազգօգուտս և օժանդակութեամք ամենաբաւական շնորհաց Հոգւոյն Մրբոյ՝ կարողացուացէ զԶեզ և զամենայն զհաւատարիմ պաշտօնեայս եկե-ղեցւոյ մերոյ սրբոյ՝ առ ի կարող լինիլ ամենայն սրբութեամբ և ար-

դիւնաւոր ութեամբ զպարտաւորութիւնս Զեր կատարել և կալ մնալ պար-
ղերես առաջի Աստուծոյ և լրութեան Ազգիս մերոյ սիրեցելոյ, սրոյ վասն
եմ, միշտ՝
ամենաջերմեռանդն աղօթաբար

ի կերպ իսկականին ստորագրեալ է
ՄԱԿԱՐ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ:

Ի 28 Մարտի 1887 ամի Փրկչական
եւ հ թուղարանութեան մեջու մ. Ա.Ց.

Տ Առըստ Էջմիածին

Թարգմանութիւն կանոնաց՝ ի լոյս ընծայելոց
ի 16 Փետրվարի 1884 ամի վասն եկեղեցական այսպէս պատ

1. Հայոց լուսաւորչական եկեղեցական ուսումնարանք անուանին ամենայն համբակրթական, տարրական (սկզբնական) կերպասեան սւսումնարանական հաստատութիւնք, որք գտանին առ եկեղեցեօք և վանօրէիւք Հայոց այսր գաւանութեան և պահպանին կամ բացառապէս ի հաշիւ եկեղեցական և վանական գումարաց, կամ օժանդակութեամբ ծխական ֆողովրդոց այնողին:

2. Ի վերայ հիման 975 յօդ. ժԱ. Հատ. 1 Մ. օրինաց Հայ լուսաւոր-
չական թեմակալ առաջնորդաց տուեալ լինին իրաւունք կառավարելոյ զե-
կեղեցական ուսումնարանս, նշանակեալս ի նախորդ յօդուածի:

Յ. Եկեղեցական ուսումնարանը բաղեալ լինին թոյլտութեամբ Հոգեոր իշխանութեան Հայոց լուսաւորչական դաւանութեան, որ պարտ է զբացմանէ իւրաքանչիւր ուսումնարանի հաղորդել Հոգաբարձուի Կովկասեան ուսումնարանական շրջանի, ցուցանելով զտելին, ուր գտանի ուսումնարանն, զմիջոցսն յականէ յանուանէ՝ որովք պահպանել ունի զայն, նաև զծրագիրս ուսման ըստ դաստանդութեան Ռուսաց լեզուի, Ռուսաց պատմութեան և աշխարհագրութեան և զժիւ նշանակեալ վասն այսոցիկ առարկայից շաբաթական դասուց։ Նոյնպէս պարտաւորութիւն դնի ի վերայ յիշեալ հոգեոր իշխանութեան՝ հաղորդել Հոգաբարձուի զիակմանէ իւրաքանչիւր ուսումնարանի, և զկարգմանէ և զարձակմանէ ուսուցչաց և վարժուհեաց, նաև զկարեւոր տեղեկութիւնն վասն վիճակագրական հաշուոց ի մասին լուսաւորութեան կողմանց։

4. Յամենայն Եկեղեցական ուսումնարանս դասատուութիւն Ռուսաց լեզուի պարտաւորական է, իսկ յայնոսիկ ուսումնարանս, յորս աւանդին ընդհանուր պատմութիւն և աշխարհագրութիւն, պարտին աւանդեալ Անիլ պատմութիւն և աշխարհագրութիւն Ռուսաց ի Ռուս լեզու:

5. Ծաւալ գասատուութեան լեզուի Ռուսաց սահմանեալ լինի համաձայնութեամբ ընդ ուսումնարանակ մն վարչութեան ի սահմանս դպրոցական ծրագրի՝ հաստատելոյ ի նախկին Փոխարքայէ Կովկասու վասն դըպրոցաց Ռուսաց, որք գոտանին ի միջի ընիկ ազգաբնակութեան և համապատասխան տեղական պայմանաց և միջոցաց ուսումնարանաց։ Պատմութիւնն Ռուսաց և աշխարհագրութիւնն աւանդեալ լինին յայնոսիկ ուսումնարանս ի գորոցաց, յորս մուծեալ է գասատուութիւն ընդհանուր պատմութեան և աշխարհագրութեան ի ծաւալի՝ սահմանելոյ վասն երկդասարան շինական ուսումնարանաց նախարարութեան Ազգային լուսաւորութեան։ Ի ժամ գասատանդութեան այսոյիկ առարկայից՝ պէտք են գործադրել միայն զայնոսիկ ձեռնարկս (գասագիրք), որք արդէն գտեալ են զհաւանութիւնն նախարարութեան Ազգային լուսաւորութեան՝ կամ ի Հոգաբարձութենէ ուսումնարանական շրջանի Կովկասու։

6. Պարտաւորութիւն գնի ի վերայ Հռոմեոր իշխանութեան, որպէս
զի յեկեղեցական դպրոցս, որք ունին բանիլ ի վերայ հիման 975 յօդ. Ա.
Մ. ԺԱ. Հատ. օրինաց, յուծեալ Անիցի կարգ դասաւանդութեան՝ Համա-
ձայն այսոցիկ կանոնաց :

7. Պարտաւորութիւն գնի ի վերայ Պետական ուսումնարանական վարչութեան հսկել ի վերայ գասաւանդութեան ամենայն առարկայից յեկեղեցական ուսումնարանն՝ բաց ի կրօնագիտութենէ։ Ընդ սմին Հոգաբարձուի ուսումնարանական շրջանի իրաւունք են, ի դէպս գտանելոյ զ՞և է յուսուցչաց կամ ի վարժուհեաց անհամապատասխան իւրում կոչման, դիմել ի Հոգեւոր իշխանութիւնն յազագս անյապաղ հեռացուցանելոյ զայնպիսին ի պաշտօնէ և ի տեղի նոցա զայլս կարգելոյ։ Ի չկատարելն Հոգեւոր իշխանութեան այսր պահանջի, Հոգաբարձուն յայտարարէ զայսմանէ Նախարարութեան Ազգային լուսաւորութեան, իսկ առանձնապէ՞՝ ի կարեւոր դէպս յայտ առնէ Կառավարչապետին քաղաքական մասին Կովկասու, որ ըստ իւր յատուկ նկատողութեան զպատշաճաւոր միջոց ի ձեւու առնու և զարարեալ տնօրէնութեանց իւրոց հասուցանէ ի տեղեկութիւն Նախարարի Ազգային լուսաւորութեան։

8. Եկեղեցական ուսումնարանք, որք ըստ դասընթացից իւրեանց եւ-
լանին արտաքոյ քան զսահմանս տարրական դպրոցաց, և ըստ կազմու-
թեան ունին առաւել քան զերկուս գասարանս կամ միմեանց յաջորդող
բաժանմունս, ենթագրին Հսկողութեան Պետական ուսումնարանական Վար-
չութեան ըստ օրինակի մասնաւոր ուսումնարանական Հաստատութեանց:

9. Վիճակաւոր Առաջնորդն ունի իրաւունս։ Եթէ ցանկանայցէ՝ յանձըն առնել զհսկողութիւն ի վերայ եկեղեցական ուսումնարանաց միում ամենայուսավի հոգեոր պաշտօնէից իւրոյ վիճակի՝ տեսչական պաշտամամբ համաձայն 973 յօդ. Ա. Մ. ԺԱԹ օրինաց։

10. Զկարգմանէ և զարձակմանէ թեմական Տեսչի Վեհակաւոր Առաջնորդն յիւրաքանչիւր նուագո հասուցանէ ի տեղեկութիւն Կառավարչապետի քաղաքական մասին Կովկասու և Հոգաբարձուի Կովկասեան ուսումնարանական շրջանի:

11. Իրաւունք Կառավարչապետի քաղաքական մասին Կովկասու և Հոգաբարձուի Կովկասեան ուսումնարանական շրջանի ըստ Հսկողութեան ի վերայ ուսուցչաց և վարժուհեաց, որք ցուցեալ են յ՛՛ յօդ, տարածանին և ի վերայ թեմական Տեսչաց:

12. Ուսումնարանք, որք ունին նպատակ պատրաստելոյ զստաշտօնեայս չոյ լուսաւորչեան Եկեղեցւոյ՝ այսինքն ձեմարանն Ա. Էջմիածնի և թեմական դպրոցք՝ ոչ ենթարկին ընդ Հսկողութեամբ Պետական ուսումնարանական Վարչութեան և նման ըստ առաջնոյն ընդ տեսչութեամբ Նախարարի ներքին գործոց:

Հաւան գտեալ ընդ կանոնադրութիւն և ընդ ծրագիրն վասն ծխական երկսեռից միդասեան և երկդասեան ուսումնարանաց Հայոց՝ հաստատեմք:

Ի վերայ իոկականին ստորագրեալ է
ՄԱԿԱՐ

ԿԱԹՈՒՂԵԿՈՍ ԱՄԵԽԱՅԻ ՀԱՅՈՑ

ԿԱՆՈՆԻՔ.

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ-ԾԽԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՑ ՀԱՅՈՑ.

Ա. ՀԱՅՐԱԿԱՆ ԿԱՆՈՆԻՔ

1. Եկեղեցական-Ծխական Ուսումնարանք Հայոց կարգեալ են առ Եկեղեցեօք և վանօրէիւք ի տալ մանկանց երկուց սեռից քաղաքաց և գիւղօրէից զոկզբնական կրթութիւն և զուսումն կարեորագոյն գիտելեաց:

2. Եկեղեցական-Ծխական Ուսումնարանք բացեալ լինին հրամանաւ Վեհափառ Հայրապետի Աղքիս և կառավարին ընդ ձեռն թեմակալ Առաջնորդաց առանձինն հրահանգաւ, սահմանելով ի նորին Վեհափառութիւնէ:

3. Եկեղեցական-Ծխական Ուսումնարանք բաժանին յերկուս կարգս՝ միդասեան և երկդասեան:

4. Ժամանակ ուսման աշակերտաց և աշակերտուհեաց սահմանի՝ վասն առաջնոյ կարգին՝ ոչ պակաս քան զերիս ամ, իսկ վասն երկրորդին՝ ամ, չինդ:

5. Եկեղեցի, որ ողութեամբ արդեանցն անձեռնչառ լիցի պահել զառանձինն Ուսումնարան, ըստ կարգադրութեան Առաջնորդի՝ կարէ օժանդակել պահպանութեան այլում՝ Ուսումնարանի:

6. Միմեանց մերձաւոր գիւղօրայք, գումարելով ի մի գեկեղեցական և զժողովրդական գումարո իւրեանց, կարեն պահել զմի կենտրոնական Ուսումնարան, զորոյ զտեղին ընտրեացէ Առաջնորդն:

7. Եկեղեցական-Ծխական Ուսումնարանք աղայոց և օրիորդաց պարախին լինել ամենայն ուրեք որիշք ի միմեանց՝ ըստ ամենայն պարագայից, թէպէտ և երկոքին ևս գտանիցին ի նմին գաւթի Եկեղեցւոյ:

8. Ամենայն Եկեղեցական-Ծխական Ուսումնարան պարտի ունիլ զկնիք ըստ որոշեալ ձեռոյ:

Բ. ՅՈՒԱԳՍ Ա.Ո.Ա.ԶՆՈՐԴԱ.Ց.

9. Առաջնորդք վիճակաց ի խնդրել ի Վեհափառ Հայրապետէն զիրաւունս բանալոյ Եկեղեցական-Ծխական Ուսումնարանս՝ պարտին յայտնել նորին Սրբութեան թէ՝ յորում տեղւոջ և որպիսի ուսումնարան կամիցին բանալ և որով արդեամբ պահպանեսցի այն:

10. Եկեղեցական-Ծխական Ուսումնարանք պահպանին ըստ կարգադրութեան Առաջնորդաց՝ Եկեղեցական արդեամբք, թոշակօք աշակերտաց և կամաւոր նուիրանօք ժողովրդեան:

11. Առաջնորդք տան հրաման առնուլ զման ինչ յեկեղեցական արդեանց՝ սահմանելով զայն ըստ չափու արդեանց Եկեղեցւոյն և ժողովուրդն օրինաւոր խոստմամբ յանձն առնու լրացուցանել զգումարն, որ պիտոյ իցէ ի պահպանութիւն Ուսումնարանին:

12. Առաջնորդք փոյթ կալցին, զի Եկեղեցական-Ծխական Ուսումնարանք պահպանեսցին անխափան, իսկ եթէ գիպեսցին պատճառք արդելուրիթք պահպանութեան միոյ իրիք յՈւսումնարանաց, նոքա՝ յետ զամենայն հնարս ի գործ գնելոյ առ ի զառաջս առնուլ փակմանն, փակեն զայնպիսին և անյապաղ յայտնեն Վեհափառ Կամթուղիկոսին, ցուցանելով զմանրամասն հանգամանս գործոցն:

13. Առաջնորդք առաջի առնեն զհոգաբարձուս ի հաստատութիւն Վեհափառ Կամթուղիկոսի:

14. Առաջնորդք զկարգմանէ և զարձակմանէ ուսուցչաց և վարժուհեաց յայտնեն անյապաղ Վեհափառ Կամթուղիկոսին:

15. Առաջնորդք զգաւառական ծխական ուսումնարանս կառավարեն ընդ ձեռն Յաջորդաց, իսկ ուր չիցեն յաջորդք՝ ընդ ձեռն գործակալ քահանայից:

Ծանօթական: Գործակալ քահանայք վերաբերութեամբ ուսումնարանական գործոց՝ ունին զնոյն իրաւունս և պարտաւորութիւնս, որք յատկացեալ են Յաջորդաց:

16. Թեմակալ առաջնորդք յաւարտ ուսումնական տարւոյ զամենայն տեղեկագիրս վերաբերեալս համօրէն ուսումնարանաց վիճակին՝ մատուցանեն Վեհափառ Հայրապետին:

Գ. ՅԱՂԱԳՍ ՀՈԳԱԲՈՐՉՈՒՅՑ:

17. Իւրաքանչիւր Ուսումնարան ունի Հոգաբարձուո, թիւ որոց ի քաղաքս որոշի ի Թեմակալ Առաջնորդաց՝ ըստ հանգամնաց տեղւոյն, իսկ ի գիւղօրայս թիւ Հոգաբարձուաց պարտի լինիլ երեք, յորոց մինն է տեղական քահանայն, ըստ որոշման Առաջնորդի, միւսն է երեսփոխան եկեղեցւոյն և երրորդն ընտրի ի հասարակութենէ գեղջն եռամեայ ժամանակաւ:

18. Յաւարտ ուսումնական տարւոյ՝ Հոգաբարձուք մատուցանեն Առաջնորդաց ընդ ձեռն յաջորդաց կամ գործակալաց զտարեկան հաշիւս մոխց և ծախուց, ևս և զընգարձակ գրաւոր տեղեկութիւնս զընթացից և զյաւաջադիմութենէ Ուսումնարանին, զոր պատրաստելոց է Տեսուչն կամ Աւագ ուսուցիչն, յաւելլով առ այն զկարեսոր վիճակագրական տեղեկութիւնս ըստ սահմանեալ ձեռյ, նաեւ զհանգամնս պաշտօնավարութեան ուսուցաց և վարժուհեաց:

19. Ռոճիկ համօրէն պաշտօնէից սահմանի ի Հոգաբարձուաց ըստ հանգամնաց տեղեացն և անձանց՝ հայելով ի գրամական կարողութիւն Ուսումնարանին:

20. Հոգաբարձութիւն Ուսումնարանին փոյթ ունի, զի ըստ չափուկարողութեան յՈւսումնարանի գտանիցին գրադարան և զանազան ուսումնական և դասական պիտոյք:

21. Հոգաբարձութիւնն ստանայ յԱռաջնորդէ զերկուո ժապաւինեալ մատեանս, յորոց ի միում ցուցակագրին ամենայն կահք և կարասիք Ուսումնարանին, ևս և գրեան և այլ ուսումնական պիտոյք, իսկ յերկրորդում նշանակին մուտք և ծախք Ուսումնարանին:

Դ. ՅԱՂԱԳՍ ՈՒԽՈՒՅՉՈՒՅՑ.

22. Տեսուչք, ուսուցիչք և վարժուհիք ընտրին ի Հոգաբարձութենէ և հաստատին յԱռաջնորդաց:

23. Ի պաշտօն ուսուցչութեան հրաւիրին անձինք, որք յաջողութեամբ աւարտեալ իցեն զընթացս ուսման ի Թեմական Դպրոցս Հայոց և յԱրքունի միջնակարգ ուսումնարանս, իսկ վարժուհիք ընտրին յայնպիսեաց, որք վկայեալ իցեն բարի վարուք և մանկավարժական հմտութեամբ իւրեանց:

Ծանօթութիւն: Եթէ Առաջնորդք հարկ համարիցին կարգել յուսուցչութիւն զանձինս, որք՝ թէւ չունին զպահանջեալն վկայագիր, բայց յայտ-

նիք են բազմամեայ փորձառութեամբ իւրեանց յասպարիզի մանկավարժութեան, պարտին յիւրաքանչիւրում նուագի առանձինն թոյլառութիւն հայցել վասն այնպիսեացն ի Վեհափառ Կաթողիկոսէն:

24. Կառավարութիւն միոյ միոյ ուսումնարանի՝ ըստ ուսումնական մասին յանձնեալ լինի ի Հոգաբարձութենէ Տեսչի կամ աւագ ուսուցչի, որք և պատասխանատու են վասն կանոնաւոր և արդիւնաւէտ դասաւանդութեանց վասն բարեկարգութեան ուսումնարանաց և առհասարակ վասն ճիշտ կատարման ամենայն պարտաւորութեանց՝ վերաբերելոց տեսչութեան ուսումնարանաց:

25. Տեսուչն կամ աւագ ուսուցիչն պահէ զցուցակ աշակերտաց կամ աշակերտուհեաց և հսկէ, զի ուսուցիչք և վարժուհիք ճշտիւ և անթերի կատարեսցեն զպաշտօնս իւրեանց:

26. Տեսուչն կամ աւագ ուսուցիչն պարտի առաջի առնել Հոգաբարձութեան զկիսամեայ համառօտ տեղեկագիր ի Յունվար ամսեան և զուարեկան մանրամասն տեղեկագիր ի Յունիս ամսեան:

27. Ամենայն ուսուցիչն և վարժուհի պարտի նշանակել ի մատենի զանուանս բացակայ աշակերտաց և աշակերտուհեաց, ևս և զառարկայս ուսման իւրաքանչիւր աւուր:

28. Տեսչին կամ աւագ ուսուցիչն պարտի են ի կիւրակէս և ի տօնական աւուրս խմբովին տանել զաշակերտաց և զաշակերտուհիս ի ժամ Ա. Պատարագի յեկեղեցի, նախապէս բացատրելով նոցա զվորհուրդ տօնին:

Ծանօթութիւն: Ուսուցիչք և վարժուհիք միշտ պարտին ընդ մանկուոյն գնալ յեկեղեցի.

Ե. ՅԱՂԱԳՍ ԱՇԱԿԵՐՏԱՅ ԵՒ ԱՇԱԿԵՐՏՈՒՀԵԱՅ.

29. Թիւ աշակերտաց կամ աշակերտուհեաց յիւրաքանչիւրում բաժանման չպարտի լինիլ աւելի քան զվաթսուն, իսկ եթէ ըստ պիտոյից տեղւոյն հարկ լիցի միաւորել ի միում սենեկի զերկուու կամ նաև զերիս բաժանմունս, յայն դէպս իսկ՝ թիւ աշակերտաց կամ աշակերտուհեաց ոչ կարէ առաւելուլ քան զվերոյգքեալ թիւս:

30. Ի պահանջել հարկին մարթ է բանալ առ միում միում բաժանման մէն մի զուգընթաց բաժանմունս հանդերձ առանձինն ուսուցչօք կամ վարժուհօք:

31. Յառաջին բաժանմումն առաջնոյ դասարանի Եկեղեցական-Ծխական Ուսումնարանաց ընկալեալ լինին մանկունք, որոց հասակ չիցէ պակաս քան զութ ամ և ոչ աւելի քան զտան և ըստ այսմ համեմատութեան ի յաջորդ բաժանմունս:

32. Յանկացողք մտանել յուսումնարան մատուցանեն ընդ ինդրագրոց զվկայական ծննդեան:

33. Ժամանակ ընդունելութեան աշակերտաց և աշակերտուհեաց է երկիցո ի տարւոջ, այսինքն ի սկիզբն տարեկան ուսմանց և ի Յունվարի:

Ծանօթական: Աշակերտք կամ աշակերտուհիք, որը մոտանիցն ի Յունվար ամսեանն, պարտին պատրաստ լինիլ տալ քննութիւն յընթացից առաջին կիսամեկի:

34. Աշակերտք և աշակերտուհիք ընդ ուսուցչաց և վարժուհեաց իւրեանց հաղորդին ո. Խորհրդոյ երկիցո ի տարւոջ՝ յաւուրս Ս. Ծննդեան և Յարութեան Տեառն:

35. Իւրաքանչիւր աշակերտ կամ աշակերտուհիք բացի վկայեալ չքառորդ՝ հատուցանէ զնշանակեալ ի Հոգաբարձութենէ գումար ինչ յաղագս ուսման և գասական պիտոյից:

Զ. ՅԱՂՈԴՍ ՈՒԽՄԱՆ.

36. Առարկայք ուսման Եկեղեցական - Ծխական Ուսումնարանացն սահմանին առանձին ծրագրաւ:

37. Գասաւանդութիւն առարկայից լինի Հայ լեզուաւ, բացի Ռուսաց լեզուէ, ի Ռուսաց պատմութենէ և յաշխարհագրութենէ Ռուսաստանի, որք աւանդին Ռուս լեզուաւ:

38. Յաւարտ ընթացից ուսման աշակերտաց և աշակերտուհեաց լինի հարցաքննութիւն առաջի Հոգաբարձուաց և ծնողաց աշակերտելոցն:

39. Մանկունք՝ որք յառաջադէմ երեխոցին ի հարցաքննութիւնս, տեղափոխեսցին ի յաջորդ բաժանմունս և աւարտողն ընդունին զվկայական ուսման:

40. Աշակերտք և աշակերտուհիք, որք ոչ յառաջադիմեսցին, կարեն մնալ ամ մի ևս ի նմին բաժանման:

41. Յաւարտ հարցաքննութեան կազմի արձանագրութիւնն ստորագրութեամբ Հոգաբարձուաց, ուսուցչաց և վարժուհեաց, յորում՝ նշանակին արդիւնք հարցաքննութեան և անուանք աշակերտաց և աշակերտուհեաց, որք արժանաւոր իցեն փոխադրութեան կամ վկայագրոյ. ևս և անուանք աշակերտաց և աշակերտուհեաց մնացելոց ի նոյն բաժանմունս, կամ իսպատ արձակելոց յուսումնարանէն, և արձանագրութիւնն այն առաքի ի հաստատութիւն Առաջնորդի ի ձեռն յաջորդաց կամ գործակալ քահանայից, որ վաւերացուցեալ զայն՝ յետս գարձուցանէ ի գործադրութիւն և ի պահպանութիւն յուսումնարանին:

42. Տեսուչն կամ աւագ ուսուցիչն պատրաստէ վկայագիրս ստորագրութեամբ Հոգաբարձուաց և իւր ինքեան՝ և անցուցեալ զայնս յառանձին մատեան Ուսումնարանին, տայ ծնողաց մանկաւոյն կամ խնամակաւց նոցա, ընդունելով ի նոցանէ ստորագրութիւն ի մատենին:

43. Ժամանակ ամարային արձակուրդի որոշի ի քաղաքս ի 15 էն Յունիսի ց25 Օգոստոսի, իսկ ի գիւղօրայս սահմանի ըստ տեղական հանգամանաց, այն է՝ ի ժամանակի հնձոց, այգեկթից ևլու ըստ որոշման Հոգաբարձութեան, զոր միանգամ ընդ միշտ հաստատէ Առաջնորդն, իսկ ուր գոյ Յաջորդ՝ Յաջորդն:

44. Աշակերտք և աշակերտուհիք Եկեղեցական - Ծխական Ուսումնարանաց արձակին յաւուրս կիւրակէից և տօնից՝ նշանակելոց յառանձին ցուցակի:

ԹԻՒ ԴԱՍՈՒՑ ՅԵՐԵՆԵԿԻ.

ՅԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՈՒԽՈՒՄՆԱՐԱՆՆ

ՏՀԱՅՑՈՅ

ԴԱՍԱՐԱՆՆ	Ա.	Բ.	ԳՈՒՄԱՐ
ԲԱԺԱՆՄՈՒԽՈՒՑ	Ա.	Բ.	ԳՈՒՄԱՐ
Ա. ԱՐԵՎԻԿԱՅԻ			
Կրօն	2	2	4 4 14
Հայոց լեզու	6	6	5 5 28
Ռուսաց լեզու	6(*)	6	5 5 22/6(*)
Ռուսաբանութիւն	4	5	3 3 20
Պատմութիւն Հայոց և Աշխարհագրութիւն Հայաստանի	»	»	3 3 6
Պատմութիւն Ռուսաստանի և Աշխարհագրութիւն Առաջնորդն	»	»	3 3 6
Ընդհանուր Աշխարհագրութիւն	»	»	2 2 4
Բնական Պատմութիւն	»	»	2 2 4
Երգեցողութիւն	2	2	2 2 10
Վայելչագրութիւն	2	3	1 1 10
Գծագրութիւն	2	2	» 6
ԳՈՒՄԱՐ	18/6(*)	26 26 30 30	130/6*)

Հրահանգ եւ ծրագիր ուսման կրօնագիտութեան վա-
սըն Եկեղեցական - Ծխական միդասեան եւ երկդասեան
ուսումնարանաց Հայոց:

ԹԻՒ ԴԱՍՈՒՑ ՅԵՇՆԵԿԻ

ՅԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՍ

ՕՐԻՈՐԴԱՅ

ԴԱՍԱՐԱՆԻ	Ա.		Բ.		ԳՈՒՄԱՐ	
ԲԱԺԱՆՄՈՒՆԻ	Ա.	Բ.	Դ.	Ե.	ԳՈՒՄԱՐ	
Ա. ԱՐԵՎԻԿ						
Կրօն	2	2	2	3	4	13
Հայոց լեզու	6	6	6	5	5	28
Ռուռաց լեզու	6(*)	6	6	5	5	22/6(*)
Քուաբանութիւն	4	4	4	3	2	17
Պատմութիւն Հայոց և աշխարհագր- ութիւն Հայաստանի			»	3	3	6
Պատմութիւն Ռուռաց և Աշխարհա- գրութիւն Ռուսաստանի			»	3	3	6
Էնդհանուր Աշխարհագրութիւն			»	2	2	4
Բնական պատմութիւն			»	2	2	4
Երգեցողութիւն	2	2	2	»		6
Վայելչագրութիւն	1	2	2	1	1	7
Գծագրութիւն	1	2	2	»		5
Զեռագործ	2	2	2	3	3	12
ԳՈՒՄԱՐ	18/6(*)	26	26	30	30	130/6 (*)

Մանօնութեան (*): 6 կէս ժամ յերկրորդում կիսամեկի:

Կարեռագոյն քան զամենայն ուսումնական աւանդելիս յԵկեղեցական Ըլ-
խական Ուսումնարանս պարտի լինիլ ուսումնական կրօնի՝ ըստ դաւանութեան
Հայաստանեայց Եկեղեցւոյ, իբրև ուսումնա այնպիսի, որով անդամք Եկե-
ղեցւոյ ի տղայ տիոց անտի դաստիարակին ի քրիստոնէական բարեպաշտու-
թեան, այսինքն է՝ յուսմունս գերագոյն հաւատալեաց և յուսմունս պար-
տուց մարդկան առ Աստուած, առ Ընկերս և առ անձինս իւրեանց,

Ուսումն կրօնի առ հասարակ բաժանի ի քանի ինչ մասունս, յորոց
կարեռքն են՝ Աղօթք, Պատմութիւն Ս. Գրոց, Քրիստոնէական վարդապե-
տութիւն, ծանօթութիւն զծիսից և զարարողութեանց Եկեղեցւոյ, Պատ-
մութիւն քրիստոնէական Եկեղեցւոյ: Այսոքիկ ամենեքեան աւանդին յայլ
և այլ չափս և ուսմունս և յայլ և այլ եղանակս յուրոյն ուսումնարա-
նը՝ ըստ դասակարգութեանցն. ըստ այսմ և ի ծխական Եկեղեցական ու-
սումնարանս. այլ զի անհնարին է և անպատեհ առ տեղեաւս ճառել զայն-
ցանէ ամենեցուն՝ յիշեցուք համառօտակի զքանի ինչ պայմանս կարեռս
վասն արդիւնաւորութեան կրօնական ուսմանցն:

Նախ՝ յուսուցման աղօթից փոյթ ունիցի ուսուցիչն այնպէս տպաւո-
րել ի սիրտս մանկանց զաղօթս բարեպաշտութեան, զի նոքա ոչ միայն կրկ-
նեսցեն զբառս սերտ ի բերան ուսեալս, այլ գիտակցութեամբ և բոլորով
սրտիւ ուղղեսցեն զմիտս առ Աստուած և զաղօթմն կարդասցեն երկիւզա-
ծութեամբ իմն և պարկեշտութեամբ և խոնարհութեամբ: Առ ի տրամա-
դրելոյ յայս զմանկունս՝ ոչինչ են պիտոյ հարկագրանք և հրամանք, այլ զի
ուսուցիչն յառաջ քան զամենայն ջերմեռանդն բանիւք և համոզական
քաղցրութեամբ զարթուացէ ի սիրտս մանկանց սէր անկեղծ՝ առ Հայրն երկ-
նաւոր, Արարիչն և նախախնամողն, որում փառս տամք և գոհութիւն
վասն անհուն բարեացն և մարդասիրութեան և առ որ դիմեմք ինսդրաւա-
ծովք յամենայն գործս մեր: Առ այս յոյժ օգտակար է, յորժամ ուսու-
ցիչն ինքնին ի սկզբան անդ դասատուութեան աղօթս արասցէ սրտառուչ
բանիւք և անկեղծութեամբ առաջի մանկանց և լուռ մասնակցութեամբ
նոյց՝ զոր օրինակ՝ վասն հիւանդ ընկերի ուրուք առողջութեան, վասն
միիթարութեան ի Հոգւոյն սրբոյ վշտացելոյ ուրումն բարեկամի, վասն ան-
փորձութեամբ անցուցանելոյ զգիշերն և վերստին արժանանալոյ ի տեսու-
թիւն իրերաց, վասն առողջութեան և յաջողութեան կենաց ծնողացն,
բարերարաց, խնամակալաց և լն: և լն: Այսօրինակ նախակրթանք յաղօթո-
պատրաստեսցեն զմանկունս յայն, զի յաւաջնոց իսկ աւուրց ուսմանն հա-

յեսցին նոքա յաղօթս, որպէս ի յաւելուած և ի բղխուած սրտից իւրեանց և յապագայս յառնելն զեկեզեցական աղօթս՝ կրկնեսցեն զիմաստ նոցին իբրև յանձանց ինչ ինչ ասացեալս, և արասցեն ի նոսա ըստ դիպաց և ըստ պատշաճից, յաւելուածս և անձնական ինդրուածս:

Յետ այսր նախապատրաստութեան՝ կրօնուսոյցն ուսուսցէ զհակիրճ մաղթանս և զաղօթս, ապա զընդարձակսն, քաղելով զայն ի ժամագրոց եկեղեցւոյս Հայոց։ Ամենայն մաղթանք և աղօթք բացատրեսցին նախ յաշ-խարհիկ լեզու և յորժամ կատարելապէս ըմբռնեալ իցէ մանկանց զիմաստունոցին՝ պահանջեսցի և բերանացի սերտումն ի գրոց լեզու։

Յուսուցման Սրբազն Պատմութեան Հնոյ և նորոյ կտակարանաց մեծապէս օգտակար է, եթէ ուսուցիչն յետ պատմելոյ զգասն՝ ընթերցցի և բացատրեսցէ աշակերտաց հատուածս ի Ս. Գրոց, վերաբերեալս նիւթոյ դասին։ Կարենոր է նմանապէս խելամուտ առնել զմանկունս բարոյական և կրթական իմաստից պատմութեանն, տալով նոցա զգալ զաղգեցութիւն առտուածային ուսմանց ի հոգիս իւրեանց, զի մի լինիցի դաս կրօնագիտութեան լոկ մէքենայական կրկնութիւն սերտեալ բառից։ Զնոյն՝ և ի դասս քրիստոնէական վարդապետութեան և ի բացատրութիւնս եկեղեցական տօնից։

Ի զարգացումն կրօնական կենաց մանկանց՝ հարկ անհրաժեշտ է, զի նոքա: մանաւանդ ի կիւրակէս և ի հանդիսաւոր աւուրս յաճախեսցեն յեկեղեցի՝ մասնակցելով ըստ կարողութեանցն յերգեցողութեան և սպասաւորելով: Մեծ լիցի յոյժ օգուտն, եթէ ուսուցիչն կրօնի ինքնին ածիցէ զաշակերտս իւր յեկեղեցի, առաջնորդ կալով նոցա և աստ իբրև օրինակ կենդանի: Զէ ինչ տարագէպ յիշել աստէն անցողաբար զի ի տիս մանկութեան, յորժամ առաւել զգայուն են սիրտքն՝ հակամէտ են մանկունք ընդունել օրինակ անձանց զամենայն, զոր տեսանեն ի վարս՝ մանաւանդ առաջնորդաց իւրեանց և գաստիարակաց. սմին իրի պարտ է ուսուցչն կը բրոնագիտութեան կշռել զանձն իւր և պատրաստել օրինակ կենդանի վասն մանկանց յամենայն ինչ, յորս կամի առաջնորդել, ունելով օրինակ զմէծագոյն Վարդապետն աստուածային ուսումնաց, որ նախ առնէր միշտ և ապա ուսուցանէր: Ոչ կարէ ուսուցիչ ոք պատուաստել ի սիրտս և ի հոգիս աշակերտելոցն՝ զորս ոչ կրէ ի սրտի իւրում և ի հոգւոջ, և ոչ ուղղել ի վարս առաքինականս, եթէ ինքնին չունիցի զայնպիսի ուղղութիւն ի վարս իւրում: Այս առաջին պահանջք են յուսուցչն, զորովք եթէ զանց առնիցէ՝ ոչ կարէ տպաւորել ի սիրտս մանկանց զուսամունս քրիստոնէական հաւատոյ, իբրև զպէտս հոգեւոր կենաց և պատրաստել զայնս աղբիւր առաքինական վարուց և անկեղծ բարեպաշտութեան:

U. S. M. M. M. P. M. N.

Ա. ՏԱՐԵ

Նախապատրաստութիւն աղօթից. — Տէրունական աղօթք. « Առաջնորդեա մեզ Տէր, Աստուած մեր » . « Անկեալ առաջի քո » . « Տէր մի դարձուցաներ զերեսս քոյլինէն » . « Պահպանեա զմեզ, Քրիստոս Աստուած » . « Զաւաւուու աղօթս և զբանաւոր պաշտօնս » . « Տէր Աստուած մեր, Պուպահեա զմեզ ի գիշերիս յայսմիկ » :

Մանր պատմութիւնք բարոյակրթականք՝ քաղեալք ի Ս. Գրոց և յայլաւստ՝ ըստ չափու հասկացողութեան մանկանց և ըստ հանգամանաց առօրեայ կենացն, բերանացի աւանդմամբ յաշխարհիկ լեզու։

F. SUPH.

«Գոհանակը զՔէն Տէր Աստուած մեր, որ զարթուցեր» . «Լուր ձայ-նից մերոց, Տէր Աստուած մեր» . «Աչք ամենեցուն ի Քեզ, Տէր, յուսան» . «Փառք Քեզ, Տէր, փառք Քեզ, թագաւոր փառաց» . «Յիշեա, Տէր, զպաշտօ-նեալս Քո, զՃնողսն մեր» . «Խայ Քո Եղիցի մեզ ապաւէն» :

Համառօտ պատմութիւնք նորոյ Կտակարանի, որք բացատրեն զիսորդուրդս տօնից Ծննդեան, Զրօրհնէից, Ընծայման ի տաճարն, Յարութեան, Համբարձման, Հոգեգալստեան, Աւետման Աստուածածնայ. Ճանօթութիւն գտօնից Խաչվերացի և Գիւտոյ լսաշին:

P. S. U. P. H.

« Քեզ երկիրպագանելով, Տէր Աստուած մեր » . « Հայր գժած բարեխնամող » . « Հրեշտակի խաղաղութեան յանձն արա զանձինս մեր » . « Ընկած Տէր, զաղաշանս մեր » . « Փառք ի բարձունս Աստուծոյ » . Հանգանակն հաւատոյ :

Նարունակութիւնը բացատրութեան եկեղեցական նշանաւոր տօնից, որպիսիք են՝ Վարդապառին, Լուսաւորչին, Թագէոսի և Բարդուղիմէոսի առաքելոցն, սրբոց Ծարդմանչացն, Մեծին Ներսիսի, սրբոց Վարդանանցն և Առովմեանց, Հռիփսիմեանցն, Էջմիածնի, Երևմանն Խաչին, Վարագայ Խաչին, և այլոցն:

Խորհուրդք մասմաց շինուածոյ եկեղեցւոյ և բացատրութիւն գլխաւոր քարոզաց և ազօթից Ա. Պատարագի:

— 90 —

Բ. Դ Ա Ր Ա Յ Ա Ն .

Դ. Տ Ա Ր Ի Ւ .

Սրբազն պատմութիւն հնոյ կտակարանի:

Քրիստոնէական Վարդապետութիւն,—Մեկնութիւն Տէրունական աղօթիցն: մեկնութիւն Հանգանակին հաւտոտոյ՝ բացատրութիւն եօթն Խորհրդոց Եկեղեցւոյ՝ ըստ դաւանութեան Հայաստանեայց Եկեղեցւոյ:

Ե. Տ Ա Ր Ի Ւ .

Սրբազն պատմութիւն նորոյ կտակարանի: Նարունակութիւն Քրիստոնէական Վարդապետութեան.—Մեկնութիւն Խամսաբանեայ պատգամաց՝ յորս բացատրին յարաբերութիւնք մարդոյ ընդ Աստուծոյ և ընդ ընկերին:

Կարդ Աստուածպաշտութեան ըստ կանոնաց Եկեղեցւոյ Հայոց:

Հրահանգ եւ ծրագիր ուսման Հայ լեզուի վասն Եկեղեցական—Ծխական միդասեան եւ երկդասեան ուսումնարանաց Հայոց:

Սկիզբն ուսման մայրենի լեզուի յառաջնում ամի լինի բերանացի վարժութեամբք, որոց նպատակ է նախապատրաստել զնորեկ մանկունս ի համակարգեալ ուսումն գրագիտութեան: Վարժութիւնքդ այդոքիկ լինին դիւրընտել զրուցատրութեամբք ուսուցչին ընդ մանկունս: Նիւթք զրուցատրութեանցն կարեն լինիլ այլ և այլ առարկայք զննելիք, առակլք, մանրավէսք, առածք և նմանք սոցին, որք ամենայնիւ գիւրահասք լիցին մանկանց՝ ըստ լեզուին և ըստ բովանդակութեան: Փոյթ լիցի ուսուցչին, զի ի վարժութիւնն՝ աշակերտ ոք՝ յորժամ խօսիցի, կամ պատմիցէ և կամ նկարագրիցէ զառարկայ ինչ՝ արտասանութիւն նորա լիցի պարզ և լիահընչիւն, ձեւ արտայայտութեանն՝ կանոնաւոր խմասոքն՝ մեկնիք և գիտակցականք և նկարագրութիւն զննելի առարկային՝ կատարեալ՝ ըստ չափու կարողութեանն: Բերանացի նախակրթանքն այսոքիկ՝ յոյժ կարեռք վասն արդիւնաւէտ ընթացից ուսուցման լեզուի, կարեն տեւել ի սկզբան անդ տարւոյն եօթնակս երկուս կամ երիս:

Յետ այսորիկ՝ ուսուցիչն մատիցէ յուսուցումն գրագիտութեան հնալուն եղանակաւ, ծանօթս տալով մանկանց նախ զէութենէ մարդկային խօսից հատուածով իրիք ի նիւթոց անտի անցեալ զրուցատրութեանց. ապա չըլծեցէ գհատուածն զայն ի նախապատութիւնս, և զնախապատութիւնս վերլուծեսցէ ի բառս, զորս՝ ապա ի վանկս, և զայսոսիկ՝ ի տառս: Յորժամ

աշակերտք այսու բնական և գիւրիմանալի եղանակաւ գիտասցեն զնշանակութիւն տառիցն ի խօսս և զիկրառութիւն նոցին, ապա պարտ է անդրադարձաբար Էազարդութեամբ զուգապատշաճ տառից կազմել զվանկս, զբառս և զնախապատութիւնս, ձևակերպելով միանգամայն ի գիր զամենայն, զոր ուսուցին մանկունք: Յոյժ օգտակար լիցի, եթէ աշակերտք, որչափ ինչ հնար իցէ, ինքնին կատարեացեն զվերտողեալ կրթութիւնսն, իսկ ուսուցիչն առաջնորդեսցէ միայն նոցա, և ի տկարանալ և եթ նոցին՝ ցուցցէ զդիւրին և զկարգաւոր եղանակն:

Զինի նախապատրաստութեանց պարտ է տալ ապա ի ձեռս աշակերտաց զյարմարաւոր գասագիրս ընթերցանութեան:

Ի ժամ ընթերցանութեան հարկ անհրաժեշտ է ուսուցչին ուշադիր լինիլ, զի աշակերտք ընթերցցին մտառութեամբ, ճշգրիտ և պարզ առոգանութեամբ և անսայթաք վերծանութեամբ: Առ այս կարեւոր է, զի ուսուցիչն ինքնին յառաջագոյն միանգամ և երկիցս ընթերցցի զդասն ի լուր աշակերտաց, ապա տացէ նոցա կրկնել զնոյն ի ներկայութեան իւրում, ուղղելով զթերութիւնսն և հուսկ յետոյ՝ տացէ զայն դաս ի սերտումն ըստ աւանդեալ կարգին: Ընդ սմին փոյթ կալցի ուսուցիչն՝ տալ յընթերցումն աշակերտաց միշտ գրուածս գիւրահաս և համապատասխանս չափու զարգացման նոցա՝ ըստ լեզուին և ըստ իմաստիցն: Սոյնպէս միտ գիցէ, զի վերծանութիւն աշակերտաց լիցի բնական ձայնիւ և պատշաճաւոր տրոհութեամբք բանից, որպէս խօսին մարդիկ ի հասարակի ընդ միմեանս, քանզի ոչ այլ ինչ է գիրն, եթէ ոչ պատկեր մարդկային խօսից: Մեծապէս վնասակար է, յորժամ թոյլատրենն մանկանց ընթեռնուլ եղանակաւոր իմն կերպիւ, իբրև թէ յեկեղեցւոյ՝ և անտեղի ձայնարկութեամբք:

Եւ զուղղագրութենէ լեզուին պարտի հոգ տանել ուսուցիչն: Ոչ եթէ յետաձգել պիտոյ իցէ զկրթութիւն ի կանոնս ուղղագրութեան ցուսումն քերականութեան, յորժամ մանրամանորէն և համակարգութեամբ աւանդելի են կանոնքն այնոքիկ, այլ անդստին ի սկզբանէ գրավարժութեանն՝ հարկ է կրթել զմանկունս նաև յուղղագրութեան: Առ այս բազումս նըպաստէ հնչական եղանակ դասաւանդութեանն, քանզի անդէն իսկ ի վերլուծելն և ի բաղադրելն զբառս, յորժամ զուտ հնչումն և եթ տառին լսի՝ առանց աւելորդ ձայնից, լսելիք ուսանելեաց ընտելանան ճշգրիտ արտասանութեան, ապա ուրեմն և ձեւակերպութեան մեն մի գրոյ: Հուսկ ուրեմն՝ ի վարժութիւն ուղղագրական կանոնաց պիտեսցի և յաճուխակի արտագրութիւն ընտրեալ և նշանակեալ հատուածոյ՝ ճշտիւ և մոաղրութեամբ, և ապա գրութիւն ի լրոյ պարզ թելադրութեամբ ուսուցչին, և միւս ես կազմելն խմբից ուղղագրելի բառից: Այս ամենայն գործնական վարժութիւնք գիւրաւ տպաւորեն ի յիշողութեան մանկանց զգիխաւորս յուղղագրական կանոնաց, չե ես միեալ ի տեսութիւնս քերականականս,

զորս առ յապայն ունին նոքա ուստանիլ։ Զամենայն վրիպակս աշակերտին անհրաժեշտ է ուղղել խնամով, զի մի տպաւորեսցին այնոքիլ ի միտս նորա և շփոթեսցեն զնա։ Յոյժ օգաակար իցէ, յորժամ ուսուցիչն կանխապէտնորիցէ և կազմիցէ հատուածս յարմարինս՝ վասն նախորոշեալ ուղղագրական գիտելեաց և հոգ տարեալ կանխուա, զի մի պարունակեսցէ յինքեան հատուածն այն բազմաթիւ գիրս վրիպելիս, քանզի բազում և յաճախական սխալմունք զհետ կարեն բերել ոգւոյ աշակերտին դլքումն և զյուսահատութիւն։

Ի խոյս հետեւանացս իսկ այսոցունց վերջնոց՝ պարտ է ուսուցչին իմոի ունել, ոչ երբէք ծանրաբեռնել զմաննկունս աշխատութեամբք, առաւել քան զկար նոյին և անդոք քան զշափ զարգացմանն, և դաս նոր՝ յայն գէպս միայն նշանակեսցի, յորժամ ստուգիւ իւրացուցեալ իցէ աշակերտաց զաւանդեալն յառաջնմէ:

Յետ համառօտագոյն ցուցմանց՝ զուսուցմանէ մայրենի լեզուիս՝ մասցեալն ամենայն թողեալ լինի հմտութեան և աշխատաւիրութեան բանիմաց ուսուցին։ Կարգեսցուք այժմ զնիւթս և զսահմանս ուսման լեզուիս ըստ ամս և բառ դասարանս։

Նախապատրաստութիւն բերանացի վարժութեամբք: Դրութիւն և ընթերցումն բառից, նախադասութեանց և կարճառօտ յօդուածոց: Ճիշտ արտասանութիւն և կիրառութիւն երկրարբառ տառից: Ճանաչումն, ճայնաւոր և բաղաձայն տառից: Պարզ առօգանութիւն և կանոնաւոր տրոհումն բառից և նախադասութեան՝ յընթեռնուլն: Ճանաչումն նշանաց առօգանութեան և տրոհման: Կիրառութիւն գլուխգրոց ի յատուկ անուանու և ի սկիզբն պարբերութեանց: Կիրառութիւն նշանաց առօգանութեան: Փոքրիկ և գիւրին ոտանաւորք բերանացի: Արտագրութիւն բառից և նախադասութեանց:

F. SUPP

Կանոնաւոր ընթերցումն յաշխարհիկ լեզու նշանակեալ յօդուածոց՝ բացատրութեամբք հանդերձ։ Համառօտութիւն պարունակութեան յօդուածոց՝ բանաւոր և մերժ գրաւոր։ Պատասխանագրութիւն առ հակիրճ և պարզ հարցմունս ուսուցչին, տուեալս առ ի վարժել զաշակերտու

ի գրաւոր արտայայտութիւն մոտաց՝ կանոնաւոր շարադասութեամբ բառից։ Մաքուր և ճիշտ ընդօրինակումն ընտրեալ հատուածոց։ Որոշումն բառից, թէ որք յայնցանէ են անուանք առարկայից, որք են անուանք որպիսութեանց առարկայից, և որք ցուցանեն զգործողութիւնս նոցունց, այսինքն է ճանաչել զանուն գոյական, ածական և զբայ՝ առանց քերականական անուանակցութեանց։ Որոշումն թուոյ անուանց։ Կիրառութիւն - և չգրոց։ Ուզզագրութիւն բառից յանգելոց յած, ստած, աղ, սա և էս։ մասնկունո։ Կիրառութիւն յգրոյն ի վերջ բառից և ի մէջն։ Որոշումն հրամայական, կոչական և բացականչական բառից։ Կազմութիւն պարզ և բարդ բառից։ Յարմարաւոր ոտանաւորք՝ քերանացի։

P. S. U. C. H.

Շարունակութիւն կրթութեանց յանսայթաք և ի կանոնաւոր ընթերց-
մունս և ի գրութեան նշանակեալ նիւթոց յաշխարհաբառ լեզու։ Գրու-
թիւն թելագրութեամբ ուսուցչի՝ ըստ կարելւոյն անսխալ։ Ուղղագրութիւն
բառից՝ յանգելոց ի մասնիկս—ուր, որդ, սին, յին, ին, ուի, ուն, եակ, ոց,
նոց, ոտ, եւ ուրդ, և այլն։ Կազմութիւն պարզ, բարդ, ածանցեալ և բաղա-
դրեալ բառից։ Որոշումն յատուկ, հաւաքական և հասարակ անուանց։
Որոշումն մասանց բանի, տալով նոցա զքերականական անուանս։ Որոշումն
նախադասութեանց և գլխաւոր մասանց նոցին։ Կիրառութիւն նշանաց տը-
րուհման։ Կրթութիւնը ի հոլովմունս և ի խոնարհմունս առանց քերա-
կանական խիստ համակարգութեան։ Բերանացի ոտանաւորք։

6. 7-00 00 00 0 00 00 00

T. S. U. P. B.

Ընթերցումն այլ և այլ քաղուածոց ի մատենագրաց և առաւելապէս յեղիշեայ և ի Փարագեցոյ՝ յաշխարհիկ լեզու։ Գրաբառ հատուածը ի Ա. Գրոց և յազգային մատենագրաց և գլխաւորապէս ի յիշատակելաց անտի՝ յերկուց հեղինակացն։ Համակարգեալ քերականութիւն աշխարհաբառ լեզուի։ Անսխալ և կանոնաւոր արտայայտութիւն մտաց՝ գրով և ի բերանոյ՝ աշխարհաբառ լեզուաւ և թարգմանութիւն գիւրին հատուածոց ի գրաբառէ յաշխարհաբառ, բաղդատելով ի պատշաճաւոր գէպս զտարբերութիւնս երկոցունց՝ ի վերջաւորութիւնս հոլովից, թուոց, ժամանակաց բայից, ևս և ի գասաւորութեան բառից։ Գրաւոր աշխատութիւնք ըստ առաջնումն, այլ միայն առաւելացոյն ընդարձակութեամբ և բաղադրութեամբ նիւթոցն և բովանդակութեանց։ Վարժութիւնք ի նամակագրու-

թիւնս և յայլ տեսակս հանապազօրեայ գրագրութեանց: Զավածոյ բանաս-
տեղծութիւնք յաշխարհիկ լեզու և ի գրոցն:

Ե. Տ Ա. Բ Ի:

Ընթերցանութիւն և գրաւոր աշխատութիւն ըստ նախընթացին, յա-
ւելլավ յաւէտ զլրացուցիչ կրթութիւնս՝ առ ի քաջավարժու առնելոյ զման-
կունս ի կատարեալ ընթերցանութեան և ի գրութեան: Թարգմանութիւն
գիւրին բանից յաշխարհաբառէ ի գրաբառն: Ստուգաբանական մասն քե-
րականութեան գրոց լեզուի և լրացումն թերութեանց քերականութեան
աշխարհաբառն՝ բաղդատութեամբ օրինաց փոփոխման երկոցունցն՝ ըստ
չափու հասկացողութեան աշակերտելոց: Վերլուծութիւն նախադասու-
թեանց ի գրոց լեզու: Ընտիր բանաստեղծութիւնք ի բերան:

**Ծրագիր ուսման Ռուսաց լեզուի յԵկեղեցական ծխա-
կան միղասեան եւ երկդասեան ուսումնարանս Հայոց:**

Ա. Դ Ա Ա Յ Ա Ն:

Ա. Տ Ա. Բ Ի:

Ուսումն Ռուս լեզուի սկսանի յերկրորդ կիսամեկէ առաջնոյ տար-
ւոյն, նուիրելով այնմ կէս ժամ՝ յաւուրն: Կէտ նպատակի դասատուու-
թեան պարտի լինիլ ծանօթս առնել զմանկունս խօսուն բարբառոյ Ռու-
սաց, քաջ միտ եղեալ զի հատուածքն այնոքիկ բովանդակութեամբ իւ-
րեանց ըստ կարի պատշաճ իցեն նիւթոյն՝ զոր կանխաւ ուսուեալ է մանկանց
ի մայրենի բարբառ իւրեանց:

Բ. Տ Ա. Բ Ի:

Զինի բաւականապէս ընտելացուցանելոյ զլսելիս մանկանց յըմբունումն
անսովոր ձայնից և կապակցութեանց նոցին, մարթ է սկիզբն առնել յաջո-
ղութեամբ ուսուցանելոյ աշակերտաց զգրագիտութիւն՝ այն է զլնթերցա-
նութիւն և զգութիւն Ռուս լեզուի: Ի նկատ առեալ զի նախ՝ հանապազօ-
րեայ կիսամամ զբաղմունք յընթացս երկրորդ կիսամեկի առաջնոյ տարւոյն
չկարեն հաստատուն ինչ արդիւնս տալ ի կրթութեան խօսուն բարբառոյ
Ռուսաց, և երկրորդ՝ զի ուսումն երկուց տարբեր լեզուաց ի միում ժա-
մանակի անյարմար իմն է յայնպիսում շրջանի յորում պահանջի ի ման-
կանց լարել զամենայն մտաւոր զօրութիւնս իւրեանց, որպիսի ինչ համա-
րելի է շրջանն յորում զինի մեքենական ընթերցանութեան մայրենի բար-

բառոյ՝ ուսելոյ յընթացս առաջնոյ ամի, անցանեն յանսայթաք և յիմաս-
տալից վերծանութիւն, վասն այսորիկ օգտակարագոյն լիցի յառաջնում
կիսամեկի չմկսել տակաւին զուսումն Ռուս գրագիտութեան, այլ շարու-
նակել զվերոյդքեալ բերանացի կրթութիւնս և միայն յերկրորդ կիսամեկէ
երկրորդ տարւոյ սկիզբն առնել հիմնաւորապէս ուսուցանելոյ զգրագի-
տութիւն Ռուս լեզուի, նշանակելով վասն զբաղմանցս ժամ մի յաւուրն՝
ողջոյն տարւոյ:

Յերկրորդ կիսամեկէ սկսանի և տեսէ ցլախճան տարւոյն ուսումն
գրագիտութեան՝ այն է ընթերցանութիւն և գրութիւն, զնիւթ զբաղ-
մանցս հիմնելով ի վերայ հատուածոց, որոց աշակերտեալքն հմտացեալ են
բանաւոր կրթութեամբք յընթացս երկուց նախորդ կիսամեկաց: Միանգա-
մայն պարտ է խորշիլ ի սովորական ընթերցմանէ հեգենայիւք, վասն զի
մանկունք քաջ ուրեմն ընտելացեալ են ողջ ածել զսիւզզոբայս ի մայրենի
լեզուի իւրեանց դարձեալ հարկ ի վերայ է ուսուցչին ի դասատուութեան
Ռուս գրութեան օգտիլ ի ծանօթութենէ տարերաց գրոց մայրենի բար-
բառոյն:

Որ ինչ հայի յեղանակ դասատուութեան Ռուս լեզուի, ուսուցիչն
չպարտի ընթերցանութեամբ և եթ հատուածոցն շատանալ, այլ վափա-
գելի է՝ զի ազգի ազգի հրահանգօք կրթեցէ զմանկունս և տացէ սեպ-
հականել զամենայն նիւթն, այն է ի բերան ուսմանիլ կանոնաւոր արտա-
քերութեամբ և իմաստալից ընթերցմամբ, հասու լինիլ բովանդակ իմաս-
տից ընթերցուածոցն, պատմել զնոյն՝ որչափ հնար իցէ՝ Ռուսերէն, և ըն-
դարձակագոյն ևս Հայերէն՝ յորժամ հարկն պահանջեցէ, զրել անսիալ
զուսեալն՝ ծանօթանալով կանոնաց ուղիղ գրութեան և գործածութեան
կէտից՝ ըստ չափու նիւթոցն ուսելոց:

Գ. Տ Ա. Բ Ի:

Ենթագրելով՝ զի ի վերջ կոյս երկրորդ ամի մանկունք բաւականապէս
ուսեալ են զգրագիտութիւն՝ թէւ ի վերայ չափաւոր հատուածոց՝ թէ ըստ
ըովանդակութեանն և թէ ըստ ընդարձակութեան նիւթոցն, ի սկիզբն եր-
բրորդ տարւոյ պարտ է զբաղիլ յուսումն ընդարձակագոյն հատուածոց
արձակ և չափածոյ բանից, նովին կարգաւ՝ որպէս ցուցաւ ի վերոյ: Ի վերջ
կոյս տարւոյն ի հատուածոց՝ ընթերցելոց պարտ է հանել կանոնս քերակա-
նականս և մանաւանդ ուղղագրականս: Յայս վայր աշակերտեալք պարտին
գիտել զլեզու Ռուսաց այնչափ՝ որչափ ինչ մատակարարեալ են նոցա հա-
տուածքն՝ ընթերցեալք յընթացս տարւոյն, այլեւ հեշտութեամբ ընթե-
նուլ զյօդուածս գիւրըմբռնելիս, զորս չեւ ևս իցէ ընթերցեալ նոցա:

(ՀՈՐՇՈՐԴ ԵՒ ՀԻՆգԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

Որպէս յաղագս բերանացի պատմութեան, այսպէս և յաղագս գրութեան և ընթերցանութեան պարտ է ի կիր արկանել զնոյն եղանակ դաստութեան՝ որ ի նախընթաց ամեն, ընթեռնելով ընդարձակագոյն հատուածս բանից բանահիւսականս, բացատրութիւն գլխաւոր կանոնաց ստուգաբանութեան և համաձայնութեան, մանաւանդ այնոցիկ, որք վերաբերիցին ուղղագրութեան։ Թարգմանութիւն դիւրին հատուածոց ի հայկականէ ի ուու լեզու։ Ընթերցումն մանկական գրոց արտաքոյ գամական պարագմանց ընդ առաջնորդութեամբ ուսուցչի։

Ծրագիր ուսման ազգային պատմութեան եւ աշխարհագրութեան Հայաստանի վասն Եկեղեցական - Ծխական երկասեան Ուսումնարանաց Հայոց:

卷之二

T. S. B. C. H.

Հայկ. — Արամ. — Արայ Գեղեցիկ, — Տիգրան Երուանդեան. — Տեղեկութիւնք զվաճառականութենէ Հայոց. — Կրօն Նախնի Հայոց (արևապաշտութիւն), գիցապաշտութիւն — Արամազդ, Անահիտ, Աւահագն). — Վաղարշակ Ա. — Տիգրան Բ. — Աբգար. — Արտաշէս Բ. — Տրդատ և Ս. Գրիգոր Լուսաւորիչ. — Արշակ Բ. — Մեծն Ներսէս. — Սահակ Պարթև և Մեսրոպ Մաշտոց. — Վարդան Մամիկոնեան. — Գալլ Աւահան:

S U C H S

Արշաւանք Արաբացւոց (Տիրան Մամիկոնեան)։ — Աշուտ Բագրատունի։ — Աշուտ Բ. Երկաթ։ — Աշուտ Գ. Պղորման։ Անի Մայրաքաղաք։ — Գագիկ Բ. — Արշաւանք Սելջուկեանց (Ալփի-Աղան)։ — Թորոս Բ. — Ներսէս Շնորհավի։ — Լևոն Բ. Թագաւոր Կիլիկիոյ։ — Վաճառականութիւն Հայոց ընդ Եւրոպացիս։ — Հեթում Ա. — Արշաւանք Թաթարաց ի Հայս։ — Լևոն Գ. — Լևոն Զ. — Լանգթամուր։ — Շահ Արաս։ — Նիկոլ Թորոսովիչ։ — Փիլիպպոս Աղքակեցի։

Աբգար Եւղոկիացի. — Հայքի Հնդիկութեամասը Սիհթար Սեբաստացի. — Յովսէփի Արզութեան. — Յովակիմ Լազարեան. — Յարութիւն Պեղծեան. — Խաչատրութ Աբովյան:

Դաստութիւն աշխարհագրութեան պարտի ընթանալ կից ընդ դաստութեան ազգային պատմութեան։ Զկնի տալոյ մանկանց զընդհանուր տեղեկութիւնս զտարածութենէ աշխարհին Հայոց, զգլիսաւոր լերանց, զլճաց և զգետոց, ևս և զարդի բաժանմանէ երկրին. ուսուցիչն պարտի ի պատմել զքաղաքական անցո՛ցուցանել ի քարտիզի զտեղիս՝ ուր անցքն գիպեցան։ Միանգամայն ի կարևոր գէպս փոյթ ունիցի հաղորդել աշակերտաց տեղեկութիւնս պիտանիս՝ զարդի վիճակէ բնակչաց այլեայլ գաւառաց և քաղաքաց։

Ծրագիր ուսման Պատմութեան եւ աշխարհագրութեան Ռուսաց յերկդասեան Եկեղեցական ուսումնարանս Հայոց:

Ա. ՊԱՑՄՈՒԹԻՒՆ ՌՈՒՍԱՑ

(1949 年 10 月 1 日 - 1950 年 9 月 30 日)

Նախնի Սլավոնք, կենցաղավարութիւն և հաւատալիք նոցա: Հրաւեր
Վարեկաց: Դարձ Օլգայի ի քրիստոնէութիւն: Մկրտութիւն Վլադիմիրի և
Ռուս ազգի: Բաժանումն և տկարանալ Ռուսաց զկնի մահուան Եարուլա-
ւի: Արշաւանք Թաթարաց: Աղէքսանդր Նեւացի: Ճակատամարտ՝ որ ի Կու-
լիկով: Միացումն Ռուս երկրի ընդ Ճեռամբ Յովհաննու Գ-ի: Նուաճումն
Ղազանի, Աստրախանի և Սիբիրիոյ: Ստրկութիւն գիւղացւոց: Խնդնակոչք:
Հաստատութիւն ի գահն Ռուսաց Ռումանեան տոհմի: Գլխաւոր դէպք ի նոր
պատմութենէ Ռուսաց ցներկայ աւուրս:

Բ. ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ ՌՈՒՍԱՑԱՆԴ

(յերկրաբան բառացունքներ) .

Նանօթութիւն երկրին Ռուսաց ի վերայ քարտիզի. սահմանք, ծովք, լիճք, գետք: Ընդհանուր ձեւ մակերևութի երկրին, լերինք: Բաժանումն Ռուսաստանի յԵւրոպական և յԱսիական մասունս, ևս և ի նահանգս և ի գաւառս (առանց անուանելոյ զայնս): Կովկաս: Մայրաքաղաքը Ռուսիոյ և նշանաւոր քաղաքը նորին: Երկաթուղիք Ռուսաց: Տարածութիւն Ռուսիոյ. թիւ բնակչաց և ցեղք նոցին:

Աւուրք եկեղեցական եւ կայսերական տօնից, յորս
պարտին աշակերտուհիք եւ աշակերտք դպրոցաց Հայոց
ազատս լինիլ ի պարապմանց դասուց եւ յաճախել յեկե-
ղեցիս:

ՏՕՆԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆԻ

Ա, 5, 6, 7, և 13 Յունվարի տօնքը Ծննդեան, Յայտնութեան և Ա-նուանակոչութեան Տեառն Յիսուսի Քրիստոսի:

Բ. Փետրվարի 14 Տօն Գառամնօրեայ Գալստեան Տեառն ի Տաճար

Գ. Տօն Սրբոց Վարդանանց գօրավարացն Հայոց :

Դ. Ապրիլի 7-ամբ Աւետեաց Ս. Աստուածածնի:

Ե. Տօն մտին ի վիրապն Ա. Գրիգորի Լուսաւորչին:

Զ. Տօն ելիցն ի վիրապէ Ա. Գրիգորի Լուսաւորչի

Է. Տօն գիւտի նշխարաց Ա. Գրիգորի Լուսաւորչի

Ը. Տօն սրբոց Թարգմանչացն Սահակայ և Մեսրոպ

թ. Տօն սրբազն Առաքելյան Թագէոսի և Սրբուհւոյ Սանդիմտոյ կուսին:
Ժ. Տօն սրբոց նախկին Լուսաւորչացն Հայաստանի Սրբազն Առաքելյան Թագէոսի և Բարդուղիմէոսի:

ԺԱ. Սեպտ. 8. տօն Ծննդեան Ա. Աստուածածնի ի Աննալէ:

ԺԲ. Նոյեմբ. 21. տօն Ընծալման Ս. Աստուածածնի ի տաճար

ԺԳ. Տօն Յղութեան Ա. Աստուածածնի ի Աննալէ:

Տօն անուանակոչութեան Վեհափառ Հայրապետի ամենայն Հայոց Տ. Տ.
ՄԱԿԱՐԱՅ, որ կատարի ի տօնի Սրբոց Հարցն եգիպտացւոց Պօղայ Մակարայ
եւլն:

80ՆՔ ԿԱՅՍԵՐԱԿԱՆՔ.

Ա. « Փետրվարի 26. Ծնունդ Ն. Կ. Մ. Աղէքսանդր Աղէքսանդրովչի,
Բ. Մարտի 2. գահակալութիւն Ն. Կ. Մ. Աղէքսանդր Աղէքսանդրովչի:
Գ. Մայիսի 6. Ծնունդ Ն. Կ. Բ. Ժառանդի Կայսեր Նիկոլայ Աղէք-
սանդրովչի:

Դ. Մայիս 15. Թագադրութիւն նոյին կ. Մեծութեանց օգոստ. Կայ-
սեր Աղքաքանդր Դ. Աղքաքանդրովին և Կայսերուհւոյ Մարիայ Ֆեօդորով-
նայի:

Ե. Յուլիս 22. Անուանակոչութիւն Օգոստավիառ Կայսեր Աղքաղացի Աղքաղացի:

Ե. Նոյեմբ. 14. Ծնունդ Կայսրուհւոյ Մարիայ Ֆեօդորովնայի:
Ը. Դեկտ. 6. Անուանակազմութիւն Ն. Կ. Բ. Ժառանգի Կայսեր Նիկո-
լայ Աղէքսանդրովիչի:

Ծայրագոյն Պատրիարք Կաթուղիկոսն Ամենայն Հայոց ի յայտարարութեանց թեմակալ Առաջնորդին Հայոց Վրաստանի և Խմբէթի որք ի 17 և ի 21 Փետրվարի 1887 ամի ընդ համարօք 66 և 82 տեղեկացեալ, զի վերատեսուչք և տեսուչք արքունի Ժողովրդական ուսումնարանաց պահանջեն ի հոգաբարձուաց և յուսուցաց եկեղեցական - ծխական ուսումնարանաց Հայոց զվիճակագրական տեղեկութիւնս, բարեհաճեցաւ պատուիրել Սինօդիս՝ խնդրել ի Հոգաբարձուէն Կովկասեան ուսումնարանական շրջանի՝ հըրամայել ստորագրեալ Խնդրեան տեսչաց և վերատեսչաց Ժողովրդական արքունի ուսումնարանաց իւրոց՝ չառնել զայդպիսի պահանջմունս ի վարչութեանց եկեղեցական ծխական ուսումնարանաց Հայոց, զորս պարտ է տալ Սինօդս համաձայն Յրդ յօդ. Բարձրագոյն հաստատեալ կանոնադրութեան վասն եկեղեցական - ծխական ուսումնարանաց Հայոց ի 16 Փետրվարի 1884 ամի միայն Հոգաբարձուին ուսումնարանական շրջանի.

Սինօդս կատարելով գհրամանն Վեհափառ Հայրապետի Ազգիս գրութեամբ ի 27 Փետրվարի տարւոյս ընդ համարաւ 468՝ Խնդրեաց ի Հոգաբարձուեն Կովկասեան ուսումնարանական շրջանի հրամայել նոցա չառնել զայդպիսի պահանջմունք. ի հետևումն որպէս Սինօդս ի 12 Մարտի այսր ամի

ընդ համարաւ 1554՝ ստացաւ գրութիւն ի Հոգաբարձուէն, յորմէ երեխ զի նա Պ. Հոգաբարձուն պատուիրեալ է վերատեսչաց և տեսչաց արքունի ուսումնարանաց՝ չառնել զվիճակագրական պահանջմունս ի Հոգաբարձուաց և յուսուցաց եկեղեցական-ծխական ուսումնարանաց Հայոց:

Զայսմանէ Սինօդս ծանուցանէ թեմակալ Առաջնորդացդ Ռուսաստանեայց ի գիտութիւն և ի կարեորն տնօրէնութիւն:

յ2 Հոկտեմբերի 1886 ամի:

Ի ցուցակաց դասագրոց, զորս ըստ հրամանի նորին Վեհափառութեան պահանջեալ և ստացեալ է Սինօդս ի վիճակաւոր Առաջնորդաց՝ հաւանութեամբ նորին Սրբութեան խմբագրեցաւ ցուցակ դասագրոց վասն գործադրութեան յեկեղեցական-ծխական միգասեան և երկդասեան երկսեռից ուսումնարանս Հայոց, զորոյ մի մի օրինակն ըստ հրամանի նորին Վեհափառութեան առաքելով առ իւրաքանչիւր Առաջնորդաց՝ պատուիրէ Սինօդս զայսոսիկ դասագրեանս միայն առնուլ ի գործադրութիւն յամենայն եկեղեցական-ծխական ուսումնարանս Հայոց՝ գտանեցեալս ի վիճակս Զեր, և եթէ անհրաժեշտ համարեսցի յաւելուլ ի սմին ցուցակի զոր և իցէ դասագիր, նախապէս խնդրել զբարեհաճութիւն կամաց նորին Վեհափառութեան, մատուցանելով ի բարեհայեցողութիւն նորին զմի օրինակ յիշեալ դասագրոյն:

ի 13 Յունիսի 1887 ամի.

ՅՈՒՅԱԿ

Դասագրոց գործադրելեաց յեկեղեցական-ծխական և եւ էրդասեան երկսեռից ուսումնարանս Հայոց:

Առարկայք ուսման.	Սնուն հեղինակի և դասագրոց.	Բաժանմունք՝ յորս գործադրելոց են դասագրեանքն.
Կրօն	Ժամագիրք	յամենայն բաժանմունս.
»	Դասատեսր ազօթից. Տ. Յակով.	յԱռաջին երկրորդ և երրորդ.
»	Եանի	
»	Ա. Ղօթատեսր Գիւտ քհ. Ա. Ղա-	յԱռաջին, երկրորդ և երրորդ.
»	նեանի	
»	Ակլրունք քրիստոնէական հաւա-	
	տոյ Հայաստանեայց յեկեցւոյ.	

Ստեփաննոս ա. քհ. տէր Ստե-
փաննոսեանի յԱռաջին երկրորդ և երրորդ.
» Սրբազն պատմութիւն հին և նոր
կտակարանի Պ. Սիմէօնեանի . . . ի Զորրորդ և հինգերորդ.
» Սրբազն պատմութիւն հին և նոր
կտակարանի Հայորդւոյ ի Զորրորդ և հինգերորդ.
» Հրահանգ քրիստոնէական հաւա-
տոյ. Մսեր Մագիստրոսի ի Զորրորդ և հինգերորդ.
Դասագիրք կրօնի՝ վասն երկրորդ
տարւոյ. Գիւտ քհ. Ա. Ղանեան . . . յԵրկրորդ.
Զեւնարկ Կրօնագիտութեան, ա-
զօթքներ և բարոյական պատմու-
թիւններ. Ս. ա. քհ. Ա. Ղաջանեանի յԱռաջին.

Հայոց լեզու

» Ազգային ընտանեկան աշխարհ. Ս. յԱռաջին.
» Ազգային գիւցաղնական աշխարհ.
» Ս. Մանդինեանի յԵրկրորդ.
» Նահապետական և հայրենի աշ-
խարհ. Ս. Մանդինեանի յԵրրորդ.
» Ուսումն մայրենի լեզուի Ղ. Ա. Ղայ-
եանի (ա. բ. գ. տարի) յԱռաջին, երկրորդ և երրորդ.
» Մայրենի լեզու. Տ. Ղեռնդեանի
(ա. բ. գ. տարի) յԱռաջին երկրորդ և երրորդ.
» Մայրենի լեզու Տ. Ղեռնդեանի գ.
տարի ի Զորրորդ և հինգերորդ.
» Առաջին ընթերցարան. Բաշա-
թրեանի. յԱռաջին.
» Հայոց լեզուի ուսուցիչ. Յ. Նազա-
րեանի (գ. տարի) յԵրրորդ.
» Նոյն. (գ. տարի) ի Զորրորդ և հինգերորդ.
» Ընտիր հատուածներ. Նոյն (ա. բ.
մասն) ի Զորրորդ և հինգերորդ.
» Նախակրթանք. Գաբրիէլ Եպիս-
կոպոսի Ա. Ղվազեան (ա. բ.) . . . ի Զորրորդ և հինգերորդ.
» Նախաշաւիլ (Կ. Կոս-
տաղկաբաղ. ա. մասն (տանեանի) զորրորդ և հինգերորդ.
» Հիւսուածք բանից նախնի պատ-
մագրաց, Կոստանեանի (ա. բ.) ի Զորրորդ.

»	Եղիշե և Փարբեցի	ի Զորբորդ.
»	Աւետարան	յամենայն բաժանմունս.
»	Քերականութիւն աշխարհիկ լեզուի	ի Զորբորդ և Հինգերորդ.
»	Քերականութիւն աշխարհիկ լեզուի	ի Զորբորդ.
»	Քերականութիւն Բահաթրեանի	ի Զորբորդ.
»	Քերականութիւն գրոց լեզուի	ի Զորբորդ.
»	Դուկասեանի	ի Հինգերորդ.
»	Պալասանեանի	ի Հինգերորդ.
»	Բագրատունոյ	ի Հինգերորդ.
Ոռուսաց լեզու	Մատերիալы къ первоначальному устному усвоению русской рѣчи и съ помошью ея къ изучению русской грамоты (учебное посо- бие) С. Мандиняна	յԱռաջին և Երկրորդ.
»	Русское слово, Т. Давтіана	յԱռաջին, Երկրորդ և Երրորդ.
»	Учебникъ русскаго языка Т. Акопянца	ի Զորբորդ և Հինգերորդ.
»	Родина Радонежскаго	ի Զորբորդ և Հինգերորդ.
»	Учебникъ русскаго языка Се- литренникова.	ի Զորբորդ և Հինգերորդ.
Քուարանու- թիւն	Հենչելի բանաւոր և գրաւոր հա- շուելու խնդիրներ. Ս. Մանդի- նեանի (ա. բ. տարի):	յԱռաջին և Երկրորդ.
»	Նոյն. (գ. տարի):	յԵրրորդ և Հինգերորդ.
»	Կենդի հանդամանքների թուա- բանութիւն. Ս. Մանդինեանի	ի Զորբորդ.
»	Քուարանական խնդիրների ժողո- վածու Գէորգէկեանի և Պան- ճուլազեանի:	յԵրրորդ և Հօգըրորդ.
»	Դասագիրք թուարանութեան, Ս.	յԵրրորդ և Հօգըրորդ.
»	Սիմէօնեանի.	ի Զորբորդ և Հինգերորդ.
»	Դասագիրք թուարանութեան Վարձելեանի:	ի Զորբորդ և Հինգերորդ.
Պատմութիւն	Պատմ: Հայոց Պալասանեանի	ի Զորբորդ և Հինգերորդ.
Հայոց և Ա. 2-	» » Ս. Արտվեանի	ի Զորբորդ և Հինգերորդ.
Խարհագրու- թիւն Հայաս- տանի	» » Տ. Աբրահամեանի.	ի Զորբորդ և Հինգերորդ.
»	Աշխարհագրութիւն Հայաստանի Ա. Տէր Յակովեանի	ի Զորբորդ և Հինգերորդ.

Պատմութիւն	Исторія Россіи для народ. учил.
Ոռուսաց և Ա. 2-	Օстрогорскаго
Խարհագրու- թիւն Ոռուսաս- տանի	ի Զորբորդ և Հինգերորդ.
»	Русская история для народ. учил
»	Пуцыковча.
»	Краткая отечеств. географія Ми- хайлова
Ընդհանուր	Ընդհանուր աշխահագրութիւն Ա.
Աշխարհա- գրութիւն	Սիմէօնեանի
Երգեցողու- թիւն	ի Զորբորդ.
»	Սանկական ձայնագրեալ երգա- րան. Եղնիկ քահանայի
»	Դասագիրք հայկական ձայնագր- րութեան. Եղնիկ քահանայի
»	Ինարիկ մանկական. Ղազ. քհնյի.
Գծագրութ.	Յովսէփիեան
»	Սակար Տ. Սարգսեանի
»	Յովհաննիսեանի և Ցէյտինի Հինգերորդ.
»	Образцы Рисованія Соковнико- вой
»	Լինднера
Հայոց վայել	Գեղագրութեան օրինակներ, Ս.
Հագրութիւն	Տ. Սարգսեանի
»	Սիանսարեանի
»	Գալֆայեանի
Ոռուսաց վա- յել ագրու- թիւն	Русскія прописи Гербача

Միամեայ փորձն անցեալ 18⁸⁶/87 ուսումնական ամի եցոյց, զի սկսա-
նիլն զուսումն գրադիտութեան լեզուին ուսուսաց յերկրորդ կիսամեկէ Երկ-
րորդ ամի յեկեղեցական - ծխական երկսեռից ուսումնարանս Հայոց՝ ոչ սա-
կաւ դժուարութեանց լինի առիթ վասն անթերի լրացուցանելոյ զհաստա-
տեալ ծրագիրն լեզուին Ոռուսաց. վասն որոյ՝ Սինօդս ըստ հրամանի Նորին
Վեհափառութեան՝ պատուիրէ ամենայն վիճակաւոր Առաջնորդացդ՝ զի ի 1ն
յառաջիկայ Սեպտեմբերի տաղիք սկսանել զուսումն գրագիտութեան լե-
զուին Ոռուսաց յամենայն եկեղեցական - ծխական երկսեռից ուսումնարանս

Հայոց՝ գտանեցեալս ի վիճակս Զեր՝ յաւազն կը բանձիւ Եւէրարդ ամէ այն
է՝ ի Ան Սեպտեմբերի՝ առանց փոփոխութիւն ինչ մուծանելոյ ի ծրագրին
յիշեալ առարկայի:

13 Յունիսի 1887 ամի.

Ծայրագոյն Պատրիարք Կաթողիկոսն ամենայն Հայոց ի նկատի տռեալ զբազմադիմի անախսրժ գրագրութիւնս ծագեալս ի մէջ թեմական Առաջնորդաց և հոգաբարձուաց ծիսական-եկեղեցական ուսումնարանաց մերոց՝ յանցելում 1886/87 ուսումնական ամի՞ եգիստ, զի ոմանք հոգաբարձուաց յիշեալ ուսումնարանաց առ անգիտութեան ոգւոյ և իմաստից՝ 22-րդ յօդուածոյ կանոնագրութեան ուսումնարանաց մերոց, որով ընտրութիւն աենչաց, ուսուցչաց և ուսուցչուհեաց յանձն լինի հոգաբարձուաց, իսկ հաստատութիւնն՝ Առաջնորդաց, երբեմն առաջարկեն Առաջնորդաց պահի հաստատութիւն ի յիշեալ պաշտամունս զայնպիսի անձինս, զորս Առաջնորդք անհամապատասխանս գտեալ այնոցիկ պաշտամանց՝ յյօժարին հաստատել, յորմէ ծագին ընդ մէջ Հոգաբարձուաց և Առաջնորդաց գժտութիւնը՝ արգելաւիթք ուսումնական յառաջադիմութեան ուսումնարանաց մերոց:

Վասն որոյ՝ Նորին Վեհափառութիւնն բարեհաճեցաւ հրամայել Աիսօ-
դիս ազգ աւանել ամենայն Վարչութեանց ուսումնարանաց ընդ ձեռն թե-
մական Առաջնորդաց ի բացատրութիւն 22-րդ յօդուածոյ կանոնակարու-
թեան Եկեղեցական-ծխական ուսումնարանաց մերոց թէ թեմական Ա-
ռաջնորդք իբրև գլխաւոր պատասխանատու յառաջադիմութեան կամ յե-
տադիմութեան ուսումնարանաց վիճակաց իւրեանց՝ իշխան են ըստ ար-
դար բարենկատողութեան իւրեանց զառաջարիեալս ի հոգաբարձուաց՝ զտե-
սուչու զուսուցիչս և զուսուցուհիս հաստատել ի պաշտամուն՝ կամ ոչ
ի հակառակ գէպս հոգաբարձուք ինքեանք համարին կանոնադանցք:

12 Հոկտ. 1886 ամի.

Ծայրագոյն Պատրիարք Խաթօւ պիկասն ամենայն Հայոց ի զանազան գրա-
գրութեանց յանցեալ 1886/87 ուսումնական ամի տեղակացաւ զի ոմանչ
երմզփոխանք, որոց ըստ զօրութեան համախօսական վճռոյ ժագավրդոյ՝ հր-
բամանցեալ է ի Ծայրագոյն Հոգեոռ Խշանութեան տալ ամ ըստ ամէ յեկե-
ղեցական արգեանց ի պահպանութիւն եկեղեցական աւսումնաբանց զար-
շեալ դրամական նպաստու նոքա յիւրաքանչիւրում նուադի կատարման
այդորիկ հրամանի անբարեմութեամի գիմեն ի խորհարդ ժագավրդոց, գիմ-
ամի յարացանելոյ ի նատ զանտեղի տարածայնաւթիւնու

Վասնորոյ՝ Նորին Սրբութիւնն բարեհաճեցաւ հրամայել Մինօդիս՝ հրամանագրել վիճակային Կոնսիստորեայից Հայոց, զի ընդ ձեռն Հոգեւոր Կառավարութեանց և Գործակալաց խստիւ պատուիրեսցեն ամենայն երեցփոխանաց, զի ի սկիզբն բացման ուսումնարանաց՝ որչափ ինչ յեկեղեցական արդեանց յատկացուցեալ է ի նպաստ պահպանութեան ուսումնարանաց, զտուցութիւն այնր նպաստի անշուշտ շարունակեսցեն անխափան ամ ըստ ամէ՝ առանց այլ ևս ի խորհուրդ ժողովրդոց դիմելոյ: Երեցփոխանք հակաւակողք այսր կարգագրութեան՝ անկցին ի պաշտօնէ:

Հ2 Հոկտեմբերի 1886 ամիս

Ծայրագոյն Պատրիարք Կաթոլղիկոսն ամենայն Հայոց ի նկատի առեալ՝
զի հոգաբարձուք ոմանք եկեղեցական -ծխական ուսումնարանաց Հայոց գիւ-
զօրէից կամ գաւառական քաղաքաց ի պատճառս ծագեալ ի մէջ իւրեանց
մասնաւոր և անձնուկան գժտութեանց՝ ձեռնթափ լինին ի կառավարելոյ-
զյանձնեալն ինքեանց զուսումնարանս, որով և առիթ լինին յետադիմու-
թեան՝ մինչև անգամ՝ և փակման այնոցիկ:

Վասնորոյ՝ Նորին Վեհավառութիւնն բարեհաճեցաւ հրամայել Սինօդիս՝ պատուիրել Հոգեոր Կառավարութեանց Յաջորդաց և Գործակալաց ընդ ձեռն թեմական Առաջնորդաց, զի յայսպիսի դէպս՝ յետ երիցս անգամ պաշտօնական գրութեամբ յորդորելոյ և զգուշացուցանելոյ զհոգաբարձուս՝ եթէ ո՞չ յօժարիցեն նոքա օրինաւորապէս վարել զպաշտօն իւրեանց՝ անկցին ի պաշտօնէ և զզեկ կառավարութեան յանձն եղեալ նոցառումնարանաց առցեն ի ձեռս իւրեանց Յաջորդն կամ Գործակալն և Հոգաբարձու քահանայն և հոգացեն օրինաւորապէս զուսումնական և զտնտեսական մասանց այնոցիկ ուսումնարանաց՝ ցընտրութիւն նորոց հոգաբարձուաց:

Դշտեմբերի 1886 ամի.



2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0038729

